

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

«Որ գանձէ անձին, և յԱստուած մեծանայցէ» (Ղուկ. ԺԲ 21):

«Ով իր անձի համար գանձ կհավաքի, և Աստուծով չի հարստանա»:

Տիրավանդ այս խոսքը կուղղվի ողջ քրիստոնյա աշխարհին և տակավին բոլորին՝ առանց խտրության: Եվ ինչպես գրեթե ամեն պատգամ, որպես հոգևոր ժառանգ, առիթի մը ծնունդ է, ահա այդպես կպատահի նաև այս պատգամի պարագային: Պարագան կամ դեպքը մեզի կպատմե Ղուկաս ավետարանիչ, զորս կուզենք վերապատմել, որպեսզի գտնենք պատճառին Քրիստոսի կողմե արտասանված՝ հոգևոր սնունդ տվող սա խոսքին.

«Ով իր անձի համար գանձ կհավաքի, և Աստուծով չի հարստանա»:

Ժողովուրդին մեջեն մեկը մոտենալով Հիսուսին կըսե. «Վարդապետ, ըսե եղբորս, որպեսզի ժառանգությունը ինձ հետ բաժնե»: Հիսուսի պատասխան խոսքը կտրուկ կըլլա և հանդիմանական. «Ո՞վ մարդ, ինձ ո՞վ դատավոր կամ բաժանարար կարգեց ձեր վրա»: Եվ անմիջապես իր խոսքը շարունակելով, ժողովուրդին դիմելով սա խոսքով. «Տեսեք, որ զգույշ ըլլաք ամեն տեսակ ագահութենե, որովհետև մարդու կյանքը իր կուտակած հարստության մեջ չէ» (Ղուկ. ԺԲ 15):

Հիսուս այս խոսքին վրա կավելցնե նաև սա առակը. «Մեծահարուստի մը արտերը առատ բերք կուտան, և ան կխորհի իր մտքին մեջ ու կըսե. «Տեսնեմ ինչ կրնամ ընել, քանի որ բերքս կուտակելու տեղ չունիմ: Եվ ինքն իր մտքին մեջ լուծումը կգտնե. գիտեմ թե ինչ պետք է ընեմ. կքանդեմ իմ շտեմարանները և ավելի մեծերը կշինեմ ու այնտեղ կհավաքեմ ցորենը և իմ ամբողջ բարիքները ու ինքս ինձ կըսեմ՝ ո՛վ մարդ, շատ տարիներու համար ամբարված բազում բարիքներ ունիս, հանգիստ ըրե, կեր, խմե և ուրախացիր»: Նույնժամայն Աստված կխոսի անոր. «Անմի՛տ, նույն այս գիշեր հոգիդ քեզմե պիտի պահանջվի, իսկ ինչ որ պատրաստած ես, որո՞ւնը պիտի ըլլա»: Նույնպես է նաև ան, ով իր անձի համար գանձ կհավաքի, և Աստուծով չի հարստանա»:

Այսօրվա ավետարանի դասը չափեն ավելի հստակ է և եթե ուզենք դուրս հանել Քրիստոսի խոսքին ու առակին մեջեն մեզի պատգամվածները, կունենանք հետևյալները.

Առաջին հերթին, Հիսուս անտեղի կգտնե, որ մարդիկ իրեն կդիմեին նյութական մտահոգություններով և իր բարկությունը լսելի կդարձնե, երբ իրեն մոտեցող մարդուն կպատասխանե ըսելով. «Ով մարդ, ինձ ո՞վ դատավոր կամ բաժանարար կարգեց ձեր վրա»: Եվ որպեսզի հիմնավորե իր բարկությունը, իր խոսքը կշարունակե ասելով. «Զգույշ եղեք ամեն տեսակի ագահութենե, որովհետև մարդուն կյանքը իր կուտակած հարստության մեջ չէ»: Եվ վերջապես, առակի պատմության ավարտին, մեր Տերը կպատգամե չհետևել մեծատունին օրինակին, որովհետև «Նույնպես է նաև ան, ով իր անձի համար գանձ կհավաքի և Աստուծով չի հարստանա»:

Ընկերության կյանքի մեջ, բոլորս ալ ականատես կդառնանք և շատ հաճախ կցավինք, երբ սիրելիներու ու հարազատներու միջև վեճ կամ անհասկացողություն կծագի իրենց հասանելիք ժառանգությունը կիսելու պահին: Եվ երբեմն, երկվայրկյանի մեջ եղբայրություններ կկործանին նյութին համար, առանց անդրադառնալու, որ ճշմարիտ կյանքը նյութական հարստության վրա չէ որ կամրապնդվի: Ահավասիկ այդ իսկ պատճառով ալ Քրիստոս մեզի կպատգամե. «Տեսեք, որ զգույշ ըլլաք ամեն տեսակ ագահութենե, որովհետև մարդու կյանքը իր կուտակած հարստության մեջ չէ»: Ինչքան տեղին է այստեղ հիշել Քրիստոսի սա խոսքը. «Մի՛ վախեցիր, փոքրիկ հոտ, որովհետև ձեր Հայրը հաճեց տալ ձեզ արքայությունը: Վաճառեցեք ձեր ինչքերը և ողորմություն տվեք. և ձեզ համար շինեցեք չհնացող քսակներ և անհատնում գանձեր երկնքում, ուր ո՛չ գողն է մոտենում, և ո՛չ ցեցը՝ փչացնում. որովհետև, ուր որ ձեր գանձն է, այնտեղ ձեր սրտերը կլինեն»:

Բնականորեն, մեծահարուստ, որուն մասին Հիսուս կպատմե, մեզի կըներկայանա իր ընչաքաղցությամբ: Եվ չափազանց հետաքրքրական է, որ Աստուծո խոսքը ուղղված է ոչ թե անոր հարստություն կուտակելու արարքին դեմ, այլ անոր համար, որ կկուտակեր իր անձի համար. «Նույնպես է նաև ան, որ իր անձի համար գանձ կհավաքի և Աստուծով չի հարստանա»:

Այս խոսքով, մեծահարուստը կրնար ցույց տալ այլ վերաբերմունք: Որով փոխանակ կուտակելու իր հարստությունը և հարուստ բերքը ամբարելու ընդլայնված շտեմարաններու մեջ, կրնար դիմել կյանքը ապրելու նոր եղանակի մը. «Աստուծով հարստանալու»:

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ, Եկեղեցին, որուն ապրող բջիջներն ենք մենք, Քրիստոսի ներկայությամբ իր պսակումը կստանա: Եկեղեցին՝ ի գլուխ ունենալով մեր Տեր Հիսուս Քրիստոս, և որուն մարմնի անդամներն ենք մենք, իր կարող գործքերով կփառավորե Աստուծո անունը: Եվ իզուր չէ այն ժողովրդական բացատրությունը, երբ կըսենք Եկեղեցի կըներենք կամ Եկեղեցի կըլլա, կնշանակե թե հավատացյալներու մեկտեղումով, աղոթքով ու երկյուղածությամբ մեր տկար էությունը կուզենք անգամ մը ևս լուսավորել Աստուծո բնակությամբ:

Եվ յուրաքանչյուր աղոթքի պահ մեր աղոթքի հոգևոր կյանքի մեջ կըներարկե ավետարանական պատգամ, որուն ընկալումը նոր ուժականություն կներշնչե բարոյապես ընկճված կամ սպառած մեր կյանքին ճիշտ այնպես, ինչպես ֆիզիկական մեր մարմինները նոր թափ կառնեն սննդառությամբ ու մեզի կպարգևեն առողջ կերպարանք:

Մեր հոգիներուն մեջ առնենք Աստուծո խոսքը. «Ով իր անձի համար գանձ կհավաքի, Աստուծով չի հարստանա»: Եվ անով թարմացնենք մեր հոգևոր կյանքը, քանզի անով իսկ պայմանավորված է Քրիստոսի Եկեղեցվո հզորացումը, որուն մարմնի անդամներեն մեկն է նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին: Ամեն: